որոշել էր վաճառականութիւնը հաստատել՝ իբրեւ միակ միջոց հարստացընելու եւ ծաղկեցընելու իր պետութիւնը։ Նա տուեց Հայերին առաջ հող՝ բնակութիւն հաստատելու համար, յետոյ հայթայթեց նրանց կարեւոր օգնութիւնը. բայց աւելին եւս արաւ. նա տուեց ցանկացողին դրամագլուխ կամ արծաթով կամ ապրանքով, որպէս զի դնան առեւտուր անեն Եւրոպայում եւ Հնդկաստանում. եւ այդ ձեռնարկութեան մէջ թագաւորն այնպիսի հիանալի աջողութիւն ունեցաւ, որ նրա մահից յետոյ, Նոր-Ջուղայում շատ վաճառականներ կային, որ երկու միլիոն կարողութիւն ունէին»։

Մի ուրիշ տեղ, Շարդէն խօսելով Հին-Ջուղայի աւերման պատճառների մասին, ասում է։

«Շահաբբաս աւերեց Ջուղան, նոյն պատճառներով, ինչ պատճառներով աւերեց Նախիջեւանն եւ Հայաստանի միւս տեղերը, որոնք մի եւ նոյն գծի վրայ էին, որպէս զի թուրքը զօրքերին պաշարից զրկէ։ Այդ նուրբ քաղաքագէտն եւ մեծ հրամանատարը տեսնելով իր ոյժերն անհաւասար իր թշնամու հետ, եւ մտածելով այն միջոցների վրայ, որոնք կարողանային արգելել նրան վերադառնալու՝ ամէն տարի Պարսկաստան նուաճումներ անելու, եւ պահպանելու, ամենաաւելի միջոցը տեսաւ, որ անապատ դարձընէ այն երկիրները, որ գտնւում են Երզրումի եւ Թաւրիզի մէջ տեղ, Երեւանի եւ Նախիջեւանի գծի վրայ. որ այն ճանապարհն էր, որ սովորաբար բռնում էին Ցաճիկներն, եւ որտեղ նրանք ամրանում էին, որովհետեւ այդտեղ գտնում էին բաւականաչափ սնունդ իրանց զօրքի համար։ Ուստի այդ երկրների բնակիչներին եւ արջառը տարաւ, աւերեց ամէն տեսակ շինութիւն, կրակ տուեց բոլոր դաշտերն եւ ծառերը. մինչեւ անգամ շատ